ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. սեպտեմբերի 4-ից 6-ը Ավստրիայի Հանրապետություն
(Վիեննա) գործուղման

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ
Հայկ Արզումանի Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ
Ավստրիայի Հանրապետություն (ք.Վիեննա), սեպտեմբերի 4-ից 6-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
Էներգետիկ համայնքի քարտուղարություն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ
Մասնակցություն Կլիմայի գործողությունների խմբի (ԿԳԽ) առաջին հանդիպմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպմանը ներկա էին էներգետիկ Համայնքի և դիտորդ երկրների էներգետիկ քաղաքականության պատասխանատու նախարարներ և փոխնախարարներ, Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներ, վերլուծական կենտրոններ, միջազգային ֆինանսական կազմակերպություններ: Հանդիպման ժամանակ ներկայացված ԵՄ-ի փորձը էներգետիկ և բնապահպանական քաղաքականությունների համատեղ մշակման, մարտահրավերները և մոտագա տարիների անելիքները: Քննարկվեց նաև կլիմայի փոփոխության ենթատեքստում բնապահպանության և էներգետիկ գերատեսչությունների համատեղ աշխատանքի անհրաժեշտություն:

Ներկայացրի Հայաստանի էներգետիկ քաղաքականության հիմնական սկզբունքները և կլիմայի փոփոխության դեմ պայքարում մեր ծրագրերը: Առաջարկ եղավ հաջորդ հանդիպմանը հայկական կողմը ավելի մանրամասնորեն ներկայացնի իր լավագույն հաջողված ծրագրերից մի քանիսը:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ընդունվեց խմբի աշխատանքի հիմնական սկզբունքները և աշխատանքային ծրագիրը: Քննարկվեցին նաև էներգետիկ համայնքի հնարավորությունները՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 23-րդ համաժողովի ընթացքում՝ ընդհանուր դիրքորոշում հայտնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական կողմից ներկա էի միայն ես, չնայած, որ հրավիրող կողմը տեղեկացրեց, որ հրավերք ուղղարկվել էր նաև ՀՀ բնապահպանության նախարարություն: Նպատակահարմար եմ գտնում ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցչի մասնակցությունը սույն ձևաչափին, քանի որ սա նաև հանդիսանալու է խորհրդատվական մարմին ԵՄ-ի համար իր համագործակցության և աջակցության ծրագրերը մշակելիս:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՀԱՅԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

08.09.2017թ.